ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ արվեստի և մշակույթի ուսումնասիրման պատմության մեջ իր ուրույն և նշանակալից տեղն ունի Գարեգին Լևոնյանը։ Նա ծնվել է 1872 թ. նոյեմբերի 6-ին Ալեքսանդրապոլում (Լենինական), անվանի աշուղ-բանաստեղծ Ջիվանու ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի ս. Փրկչի չորսդասյան թեմական դպրոցում, ապա ուսումը շարունակել է Ալեքսանդրապոլի պետական վարժարանում։ 1895 թ. Ջիվանին ընտանիքով տեղափոխվում է Թիֆլիս, ուր նոր հեռանկարներ են բացվում արդեն իր որոշակի նախասիրություններն ունեցող երիտասարդ Լևոնյանի առջև։ 1892 թ. նա Ալեքսանդրապոլում լույս էր ընծայել «Հայ աշուղներ», իսկ 1894 թ.՝ «Հայ պարբերական մամուլը» աշխատությունը, որ Պոլսում, տակավին ձեռագիր վիճակում, արժանացել էր Սահակ-Մեսրոպյան մրցանակի։



Թիֆլիսում Գ. Լևոնյանը մտերմանում է ժամանակի արևելահայ նշանավոր դրական գործիչների՝ Սունդուկյանի, Աղայանի, Պռոշյանի, Մուրացանի, Թումանյանի և այլոց հետ։ 1896 թ. նա ուսումնառության նպատակով մեկնում է Մոսկվա, ուր նկարչության դասեր է առնում։ 1898 թ. մարտին Գ. Լևոնյանն անցնում է Պետերբուրգ, նախ՝ կարճ ժամանակով սովորում է ակադեմիկոս Դմիտրևի նկարչական արվեստանոցում, ապա ընդունվում տեղի Արվեստից ակադեմիան։ Պետերբուրգում ուսանելու տարիներին Գ. Լևոնյանը ռուս և արտասահմանյան գրականության դասականների մասին «Նոր-Ռարի» էջերում տպագրում է մի շարք հոդվածներ։

1902 թ. ավարտելով ակադեմիան, Գ. Լևոնյանը հրավիրվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան՝ գեղարվեստի տեսություն և նկարչություն դասավանդելու։ Ճեմարանում դասավանդելու տարիներին նա ուսումնասիրում է Էջմիածնի մատենադարանի միջնադարյան ձեռագրերը, գրում «Աշուղների մասին» իր ծավալուն աշխատությունը (1903—1906 թթ.)։

1906 թ. Լևոնյանը մեկնում է Գերմանիա. Լայպցիգում հինգ ամիս աշխատում է փորագրական նշանավոր մի արվեստանոցում, հմտանում փորագրական արվեստին, և երբ վերադառնում է Կովկաս, աղատվում է Գևորգյան ճեմարանից, Թիֆլիսում բացում է նկարչական դասընթացներ՝ մի քանի տարվա ընթացքում պատրաստելով նկարչության բազմաթիվ ուսուցիչներ։ 1908 թ., միամյա լուրջ նախապատրաստությունից հետո, Գ. Լևոնյանը իրագործում է իր տարիների փայփայած իղձը՝ հրապարակ հանելով «Գեղարվեստ» գրական-գեղարվեստական պատկերազարդ հանդեսի առաջին համարը։ Հայ գրագետները սիրով ու խանդավառությամբ են ողջունում «Գեղարվեստի» հրապարակ գալը։ Լևոնյանի անդուլ ջանքերի շնորհիվ, «Գեղարվեստի» շուրջն են համախմբվում ժամանակի հայ արվեստի, գրականության ու գիտության լավագույն ներկայացուցիչները։ Հանդեսը, թեև նյութական միջոցների սղության և այլ պատճառներով, իր տասնչորսամյա գոյության ընթացքում (1908—1922 թթ.) ունենում է սահմանափակ թվով համարների հրատարակություն (ընդամենը յոթ գիրք), բայց իր որակով ու նշանակու-

թյամբ խոշոր դեր է խաղում հայ մշակութային կյանքում, մեծ զարկ է տալիս հայ գեղագիտական մտքի զարգացմանը, արվեստի, գրականության և առհասարակ գեղեցիկի պրոպագանդմանը։

1910—1911 թթ. Գ. Լևոնյանը պաշտոնավարում է Ներսիսյան դպրոցում, իսկ հաջորդ երկու տարիներին՝ 1912—1913 թթ. ճամփորդում է Արևմտյան Եվրոպայում։ Իր հետաքրքրաշարժ ճանապարհորդական տպավորությունները նա ամփոփում է «Աշխարհն-աշխարհ կամ 20 000 վերստ Եվրոպայում» ուղեգրությունների մեջ։ Այդ ճամփորդությունները նշանակալիորեն նպաստում են արվեստագետ Լևոնյանի ճաշակի զարգացմանն ու մտահորիզոնի ընդլայնմանը, դրականորեն անդրադառնում «Գեղարվեստ» հանդեսի թեմատիկ ընդդրկումների և արվեստագիտական որակի վրա։ Հետագա տարիներին, մինչև Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատվելը, Գ. Լևոնյանն իր արվեստաբանական գործունեության զուգընթաց զբաղվում է նաև գրականագիտական աշխատանքով։ Նա մամուլում պարբերաբար հանդես է գալիս մեր գրական նշանավոր գործիչներին նվիրված սեղմ, բնութագրական հոդվածներով։

Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրերից Գ. Լևոնյանը լծվում է Անդրկովկասի կուլտուրական շինարարության գործին։ Նա արվեստի գծով մի շարք պաշտոններ է վարում և՛ Հայաստանում, և՛ Վրաստանում. դասավանդում է Երևանի գեղարվեստական տեխնիկումում, մանկավարժական ինստիտուտում և պետական համալսարանում, աշխատում է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտում։ 1925 թ. Լևոնյանն ընտրվում է ՀԽՍՀ հնությունների պահպանության կոմիտեի անդամ, 1939 թ.՝ ԽՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի պատմության և գրականության ինստիտուտի գիտխորհրդի անդամ։ 1932 թ. արվեստագիտական ու մշակութային գործունեության 40-ամյակի առթիվ Գ. Լևոնյանին շնորհվում է, առաջինը Հայաստանում, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։ Իր մանկավարժական ու հասարակական աշխատանքներին համընթաց Գ. Լևոնյանն զբաղվում է գիտական արգասաբեր գործունեությամբ։ Այս շրջանում առավել ընդլայնվում են և խորանում նրա՝ նախորդ շրջանից սկրող գիտական նախասիրությունները։ 1920—1930-ական թթ. և հետագա տարիներին իրար հետևից լույս են տեսնում հայ արվեստի ու գրականության տարբեր հարցերին ու հեղինակներին նվիրված նրա մի շարք արժեքավոր գործերը։

Գարեգին Լևոնյանը վախճանվել է Երևանում 1947 թ. սեպտեմբերի 28-ին, 75 տարեկան հասակում։

Գարեգին Լևոնյանի գիտական պրպտումներն ու ստեղծած արգասիքները կարելի է սահմանափակել երեք հիմնական բնագավառով՝ 1. աշուղագիտությամբ, 2. հայ թատրոնի և արվեստի պատմությամբ և 3. հայ պարբերական մամուլի և տպագրության արվեստի պատմությամբ։

Հայ աշուղների և նրանց արվեստի ուսումնասիրության պատմության մեջ բացառիկ տեղ ու դեր ունի Գարեգին Լևոնյանը։ Իր գիտական որոնումների սկզբնաքայլերից մինչև կյանքի ավարտը աշուղներն ու նրանց արվեստը չեն դուրս գալիս Լևոնյանի հետազոտական տեսադաշտից։ Տակավին քսան տարեկան՝ Գ. Լևոնյանը հայրենի Ալեքսանդրապոլում հրատարակում է իր գիտական երախայրիքը՝ «Հայ աշուղներ» (1892 թ.) աշխատությունը, որն իր բնույթով, ոգով ու ոճով շատ բանով էր նախորոշում Լևոնյան-հետազոտողի ապագա դիմաստվերը։ Փաստական նյութի առարկայական մատուցում առանց կանխակալ ենթադրությունների ու հետևությունների մոլության, համեստություն, նյութի արժեքի գիտակցում և նյութի նկատմամբ պատմական մոտեցում,—ահա այն էական հատկանիշները, որ բնորոշ էին Լևոնյանի ոչ միայն անդրանիկ աշխատությանը, այլև հիմնական գծերով հատուկ էին նրա գալիք ուսումնասիրություններին։ Բայց Լևոնյանի երախայրիքը հիշարժան էր նաև պատմական ու բանասիրական առումներով։ Առաջին անգամ մեր բանասիրության մեջ, ժամանակագրական համակարգված հաջորդականությամբ, հեղինակ առ հեղինակ կենսագրական և այլ կարգի տվյալներ էին հաղորդվում շուրջ երկհարյուրամյա ժամանակաշրջան ընդգրկող 225 հայ աշուղների մասին, մի տեղեկատու գործ, որ, իր թերություններով հանդերձ, մինչև այժմ էլ ունի հանրագիտական-մատենագիտական արժեք։ Գ. Լևոնյանի հայացքը աշուղների և նրանց արվեստի նկատմամբ առավել խոր ու ընդլայնված՝ դրսևորվում է տասը տարի անց գրած «Աշուղների մասին» ծավալուն հետազոտության մեջ[1]։ Այստեղ հեղինակը քննում է աշուղների՝ իբրև ժողովրդական երգիչների խաղացած հասարակական դերը եվրոպական ու արևելյան հին աղգերի, այդ թվում

1 Տե՛ս «Աղդագրական հանդես», 1903, գիրք 10, էջ 39—93, 1904, գիրք 11, էջ 129—196, գիրք 12, էջ 84—94, գիրք 13, էջ 87—111։ Գ. Լ ևոնյան, Երկեր, Երևան, 1963, էջ 50—228։

նաև հայերի կյանքում։ Բազմակողմանիությամբ քննվում են աշուղական կենցաղի առանձնահատկությունները, աշուղների անձնական ու հասարակական կյանքի յուրահատկությունները, դրանց արտացոլումը աշուղական երգերում, վերջիններիս բանաստեղծական ու հասարակական արժեքը։ Նա ուսումնասիրության առարկա է դարձնում աշուղական բանաստեղծության առանձնահատկությունները, մասնավորապես տաղաչափությունն ու երգերի տեսակները և դրանով իսկ մեզանում առաջին անգամ ստեղծում աշուղական արվեստի տեսություն։ Աշուղական արվեստի ուսումնասիրությունը Լևոնյանը համալրում է մեկ այլ կողմից ևս՝ աշուղական եղանակների և հրաժշտական գործիքների դասակարգումով և քննությամբ, որով ամբողջանում է աշուղների մասին իր աշխատությունը։ Մահվանից մի քանի տարի առաջ՝ 1944 թ., Լևոնյանը հրատարակում է «Աշուղները և նրանց արվեստը» աշխատությունը, մի գործ, որը հիմնականում լինելով նախորդի համառոտությունը, բայց և զգալի չափով վերամշակված էր, համալրված նոր նյութերով, փաստերի նորոգ ճշտված մեկնաբանություններով։

Եթե նշված ուսումնասիրություններով Լևոնյանը ստեղծում էր աշուղների մասին մի համակարգված գիտական ուսմունք, ապա «Սոցիալական գաղափարները հայ աշուղական երգերի մեջ»[2] և «Հայ ժողովրդական և աշուղական երգերը»[3] ուսումնասիրություններով նա շոշափում է աշուղական բանաստեղծության գաղափարաբանության և ձևի խնդիրները։ Աշուղական երգերը դիտելով իրենց ստեղծող հեղինակների սոցիալական պատկանելության, միջավայրի և հասարակական կոչման սերտ աղերսի մեջ, Լևոնյանը բացահայտում է XVII—XIX դարերում ապրած մի շարք նշանավոր աշուղների երգերում առկա դասային ու սոցիալական անհավասարության, դաժան շահագործման, կարիքի ու իրավազրկության, մասնատիրական հարաբերություններով պայմանավորված հասարակության բարոյալքման մասին բազմաթիվ խոսուն մոտիվներ, որոնք ըմբռնվում են իբրև սոցիալական շարիք և հենց այդ պատճառով էլ խստագույնս դատապարտվում ժողովրդի ներքնախավերից ելած, ժողովրդին անշահախնդիր ծառայող «խալխի նոքարներից» կողմից։ Դրանով բացահայտվում էր գաղափարախոսական մի կարևոր հատկանիշ հայ աշուղական բանաստեղծության մեջ և մի նոր կողմից ևս հարստանում հայ աշուղագիտությունը։ Բացի այդ, Լևոնյանը հայ ժողովրդական և աշուղական երգերի համեմատությամբ մատնանշում է այդ երկու երգատեսակների որոշակի հարաբերությունը, երևան է հանում դրանց ձևական-կառուցվածքային առնչությունները։ Հայ աշուղների նկատմամբ իր հարկը Գ. Լևոնյանը հատուցում է նաև առանձին աշուղների նվիրված ուսումնասիրություններով։

Տակավին իր դիտական սկզբնաքայլերի ժամանակ (1896 թ.) Գ. Լևոնյանը «Հանդես գրականական և պատմական» պարբերականում (№ 7) տպագրում է «Հայկական այժմյան քնարերգական բանահյուսությունը և աշուղ Ջիվանին» ուսումնասիրությունը[4], ուր մեր միջնադարյան և հատկապես XIX դարի քնարերգության տեսադաշտի վրա ուրվագծում է Ջիվանու կյանքի և գրական վաստակի պատկերը, ի հայտ է հանում նրա բանաստեղծությունների էական մոտիվներն ու գաղափարական միտումները, ըստ արժանվույն գնահատում Ջիվանու խաղացած պատմական խոշոր դերը աշուղական արվեստի ազգայնացման խնդրում և XIX դարի երկրորդ կեսի հայ ժողովրդական մտավոր կյանքում առհասարակ։ 1936 թ. Լևոնյանը հրատարակում է Ջիվանու երգերի հավաքածուն, որն իր ծավալով մինչ այդ տպագրվածներից ամենաստվարն էր։ Կազմողը ժողովածուն օժտել էր Ջիվանու կյանքն ու գործը համառոտակի ներկայացնող մի առաջաբանով, ուր կենսագրական, գրական-ստեղծագործական և մի քանի այլ կարգի նոր ու թարմ տվյալներ էին հրապարակվում երգչի մասին։ Գ. Լևոնյանի հրատարակած ժողովածուն կարևոր ավանդ էր ջիվանագիտության մեջ և փաստագրական կայուն հիմք՝ գալիք ուսումնասիրողների համար։

Մյուս հայ նշանավոր աշուղ-բանաստեղծը, որ արժանացել է անվանի աշուղագետի ուսումնասիրությանը, Սայաթ-Նովան է։ Վերջինիս ևս, Ջիվանու նման, հաճախ է անդրադարձել Գ. Լևոնյանն իր աշուղագիտական աշխատություններում, բնորոշելով ու գնահատելով Սայաթ-Նովայի պատմական տեղն ու դերը հայ աշուղական բանաստեղծության ու արվեստի զարգացման մեջ։ Սակայն Լևոնյանի գլուխ-գործոցը այս առումով նրա «Սայաթ-Նովա» արժեքավոր

---

2 Գ. Լ ևոնյան, Երկեր, էջ 229—257։

3 ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», 1930, № 4, էջ 160—178։ Գ. Լ ևոնյան, Երկեր, էջ 258—283։

4 Գ. Լ ևոնյան, Երկեր, էջ 19—49։

աշխատությունն է[5], բանաստեղծի հայերեն խաղերի լիակատար ժողովածուն՝ կից ընդարձակ ուսումնասիրությամբ, արժեքավոր ծանոթագրություններով, բառարանով և բաղմալեզու մատենագիտությամբ։ Դա, Գ. Ախվերդյանի հրատարակությունից հետո, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի առաջին ամբողջական հրատարակությունն էր։ Ժողովածուն առաջին անգամ ամփոփում էր Սայաթ-Նովայի մինչ այդ հայտնի կամ նորահայտ հայերեն բոլոր խաղերը, հետևաբար և դառնում նրա գրական ժառանգության լիակատար հրատարակությունը տվյալ ժամանակահատվածի համար։ Հաշվի առնելով և յուրովսանն ամփոփելով սայաթնովագիտության մինչև 1930-ական թվականները ձեռք բերած նվաճումները, Գ. Լևոնյանը քննական մոտեցումով վերագնահատում է դրանք նոր փաստերով ու կովաններով, ճշգրտում կամ կրկին վերահաստատում երգչի ծննդավայրի, ծննդյան թվականի, տարաշխարհիկ ճամփորդության, կրոնավոր լինելու, մահվան թվականի և պարագաների, անվան ստուգաբանության, երգերի հասարակական և գեղարվեստական արժեքի, կրած և թողած ազդեցությունների խնդիրները։ Հարկավ, շոշափած ոչ բոլոր հարցերն էին աչքի ընկնում տեսակետների նորությամբ, բայց բանասիրական զբաղվածությունը, շրջահայացությունը, կարծիքների փաստացի հիմնավորվածությունը առկա են ամենուրեք։

1941 թ. հրատարակած «Սայաթ-Նովայի խաղերի տաղաչափության մի քանի առանձնահատկությունների մասին» հոդվածում[6] Գ. Լևոնյանը, իրավամբ, սայաթնովագիտության թերություններից է համարում երգչի խաղերի տաղաչափական յուրահատկությունների ուսումնասիրված չլինելը։ Ջեռնարկելով տվյալ բացի վերացմանը, Լևոնյանը տաղաչափագիտական քննություններով ապացուցում է, որ Սայաթ-Նովան ոչ միայն աշուղական տաղաչափության ավանդական ձևերի սոսկական կիրառող է, այլև մի շարք ձևերի (ղոշմա, մուխամմաղ, ղաղել, դյուբեյթ) վերակերտող-զարգացնող, հայ աշուղական գրականության մեջ տաղաչափական նոր ձև (ռազիանի) գործադրող, տաղաչափական պարզ ձևերից երկու կամ երբեմն էլ երեք բաղադրիչներով բարդ ձևեր կազմող (մուխամմաղ-բայաթի, վարսաղի-ալիֆլամա, ռուբայի-բայաթի-թեջնիս և այլն)։ Բացի այդ, Գ. Լևոնյանը Սայաթ-Նովայի կողմից արական և իգական հանգերի վոխնիփոխ կիրառությունը ևս կարևոր նորություն է համարում հայ աշուղական բանաստեղծության մեջ։ Դրանով Սայաթ-Նովայի բանաստեղծության պատմական արժեքը գնահատվում է նաև բանաստեղծական ձևերի զարգացման տեսակետից և բացահայտվում Սայաթ-Նովայի նորարարական գերը աշուղական տաղաչափության բնագավառում։

Մեծ Թիֆլիսեցուց բացի, XVIII դարի հայ գրական դեմքերից Գ. Լևոնյանի հետաքրքրությանն է արժանանում պոլսահայ քերական, բանաստեղծ ու երաժիշտ Բաղդասար Դպիրը։ Սկսած 1919 թ. նա հետաքրքրվում է Բաղդասար Դպիրի կյանքով ու գրական ժառանգությամբ, արդյունքները հրապարակելով առանձին զեկուցումների, վերջում նաև մենագրական ուրվագծի ձևով[7]։

Մինչ այդ Բաղդասար Դպիրի մասին քիչ բան էր հայտնի։ Լևոնյանը սկզբնաղբյուրների հետաքրքրությամբ վերականգնում է Բաղդասարի կենսագրությունը, հավաստում, որ քերական Բաղդասարը և բանաստեղծ Բաղդասարը միևնույն անձնավորությունն են։ Միաժամանակ նա ապացուցում է, որ Բաղդասար Դպիրը եղել է նաև երաժիշտ, իր բանաստեղծությունները հարմարեցրել է պատրաստի եղանակներին, ապա հորինել է նորերը և տարածել։ Արժեքավորելով Բաղդասար Դպրին իբրև քերականի, Լևոնյանը առանձնապես բարձր է գնահատում նրան որպես բանաստեղծի, որի երգած կրոնական, սիրային, բարոյա-խրատական, անձնական և բնության մոտիվներից իրավամբ մեծ արժեք է տալիս սիրո և բնության երգերին, կիրառած տաղաչափական կատարյալ ձևերին, հարուստ ու գունագեղ պատկերավոր լեզվին։ Ըստ Լևոնյանի՝ Բաղդասար Դպիրը մի կողմից միջնադարյան տաղասացների ավանդների շարունակողն է, մյուս կողմից՝ արևելյան աշուղական երգերի տաղաչափական ձևերի առաջին կիրառողը մեզանում, որով իսկ դառնում է մի փոխանցիկ օղակ միջնադարյան տաղերգության և աշուղության։

---

5 «Սայաթ-Նովա, Հայերեն խաղերի լիակատար ժողովածու. 46 խաղ Գ. Ախվերդյանի հրատարակությունից, 8 խաղ Գ. Ասատուրի հայտաբերածից, 6 խաղ զանազան աղբյուրներից», Երևան, 1931, 196 էջ։

6 Տե՛ս «Սովետական գրականություն», 1941, № 2։ Գ. Լ ևոնյան, Աշուղները և նրանց արվեստը, Երևան, 1944, էջ 87—98։ Գ. Լ ևոնյան, Երկեր, էջ 404—414։

7 Գ. Լ ևոնյան, Պաղտասար Դպիր. քերական, բանաստեղծ և երաժիշտ XVIII դարում, ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», 1927, № 2, էջ 114—132։ Գ. Լ ևոնյան, Երկեր, էջ 284—308։

Գ. Լևոնյանի գրչին են պատկանում «Գևորգ Ախվերդյան» (1929 թ.) և «Աշուղ Շերամ» (1945 թ.) դիմապատկերները, որոնցից առաջինում ներկայացվում է և գնահատվում հայ բանասիրության երախտավոր, հայ աշուղագիտության հիմնադիր Գ. Ախվերդյանի կյանքն ու գործը, երկրորդում գնահատվում է հայ աշուղության կարկառուն և ինքնատիպ ներկայացուցիչներից մեկի՝ աշուղ Շերամի (Գրիգոր Տալյան) դրական-երաժշտական վաստակը, հատկապես ընդգծվում նրա եղանակներ հորինելու մեծ վարպետությունը, հորինած եղանակների թովիչ գունագեղությունը։

Հայագիտության հաջորդ բնագավառը, ուր իր պատշաճ լուման է ներդրել Գ. Լևոնյանը, հայ պարբերական մամուլի և տպագրության պատմությունն է։ Դեռևս իր գիտական գործունեության արշալույսին, 1895 թ., Ալեքսանդրապոլում Գ. Լևոնյանը հրատարակում է «Հայոց պարբերական մամուլը» ծավալուն աշխատությունը[8], որը հայ պարբերական մամուլի պատմության սկզբնավորումից մինչև 1894 թ., այսինքն՝ շուրջ մեկ հարյուրամյակ ընդգրկող ժամանակահատվածի առաջին ամբողջական և համակարգված պատմա-մատենագիտական տեսությունն էր, ուր տասնամյակ առ տասնամյակ նկարագրվում էին տվյալ տասնամյակում հրատարակված պարբերականները՝ համապատասխան մատենագիտական տվյալներով, ինչպես նաև ծանոթությունների կարգով ներկայացվում յուրաքանչյուր պարբերականի մասին արտահայտված մատենագրական կարծիքներն ու գնահատականները։ Հայ պարբերական մամուլի պատմության ուղղությամբ Գ. Լևոնյանի պրպտումները շարունակվում են հետագայում ևս։ 1898 թ. „Братская помощь"-ում տպագրվում է նրա „Армянская периодическая печать. Историческая справка" աշխատությունը, իսկ 1905 թ. Թիֆլիսի «Լույս» օրացուցային հանդեսում լույս է տեսնում «Լիակատար ցանկ հայ լրագրության (1764—1904)» մատենագիտական աշխատությունը, որը մի նոր որակ էր Լևոնյանի նախորդ աշխատությունների համեմատ և գալիս էր ժամանակի ընդգրկմամբ լրացնելու դրանք։ Հայ պարբերական մամուլին նվիրված Լևոնյանի և առհասարակ հայ բանասիրության լավագույն մատենագիտական երկը մնում է Մելքոնյան ֆոնդի կողմից 1934 թ. հրատարակված նրա «Հայոց պարբերական մամուլը»[9]։ Դա Գ. Լևոնյանի առաջին աշխատությունից տարբերվում էր նյութի ընդգրկման լիակատարությամբ, ժամանակի ընդգրկմամբ (140 տարի) և նյութի մատուցման կատարելությամբ։ Աշխատության բուն մասն էր կազմում «Ժամանակագրական մայր ցուցակը»՝ պարբերականների մասին հաղորդող իր էական մատենագիտական տվյալներով։ Աշխատության օգտագործումը հեղինակը մեծապես դյուրացրել էր տարբեր օժանդակ ցանկերի տեղադրումով։ Եթե դրանց ավելացնենք մինչհեղափոխական հայ լրագրության անցած ուղու պատմական համառոտ տեսությունը, որ դրված է «Ներածություն» անվան տակ և աշխատության հրատարակության հանգամանքները պարզաբանող առաջաբանը, ապա կարծում ենք, պարզ կդառնա նշված աշխատության ամբողջական պատկերը։

Պարբերական մամուլից զատ Գ. Լևոնյանին շահագրգռել է հայ գրքի և ընդհանրապես տպագրության արվեստի պատմությունը։ 1946 թ., մահվանից մեկ տարի առաջ, նա հրատարակում է «Հայ գիրքը և տպագրության արվեստը» մենագրությունը[10]։ Աշխատությունը հայ գրքի ու տպագրության մի սեղմ ու փաստալից պատմություն է, որ սկզբնավորվում է տակավին մեր գրի ու գրչության արվեստից և հասնում մինչև XX դար։ Թեպետ հայ գրքի ու տպագրության պատմությանը նվիրվել էին մի քանի աշխատություններ, այն էլ ստվարածավալ, այդուհանդերձ, Լևոնյանի գիրքն աչքի է ընկնում փաստացի նյութի առատությամբ, փաստերի նոր ու թարմ մեկնաբանություններով։ Թեպետ հայ տպագրության գործի սկզբնավորման ու զարգացման դրդապատճառներին գրքում երբեմն միակողմանի մեկնաբանություններ են տրվում, բայց Լևոնյանի աշխատությունը մի կարևոր ներդրում էր հայ տպագրության և առհասարակ հայ մշակույթի պատմագրության բնագավառում։

Լևոնյանի գիտական հետազոտությունների մյուս բնագավառը հայ արվեստի պատմությունն է՝ իր տարբեր դրսևորումներով։ Կրթությամբ լինելով արվեստաբան, նա իր ուշադրու-

---

8 «Հայոց պարբերական մամուլը. պատմական տեսություն սկզբից մինչև մեր օրերը (1794—1894), ընդարձակ ծանոթություններով», գրեց Գարեգին Ջիվանի Լևոնյանց, Ալեքսանդրապոլ, 1895, 572 էջ։

9 «Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794—1934), առաջաբանով, ներածությամբ, ծանոթագրություններով և աղյուսակներով», կազմեց Գ. Լևոնյան, Երևան, 1934։

10 Գ. Լ ևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը, Երևան, 1946 (երկրորդ հրատ. 1958)։

թյունը սկսում է հայ արվեստի ինչպես պատմական, նմանապես և ժամանակակից խնդիրների հետազոտմանը։ Դեռևս էջմիածնի ճեմարանում դասավանդելիս Լևոնյանը Կոմիտասի հետ նախաձեռնում է հրատարակել հայ արվեստին նվիրված մի հանդես։ Թեև այդ չի իրագործվում, բայց տեսանք, որ ինքը հաջորդ տարիներին գործը միայնակ է գլուխ բերում՝ Թիֆլիսում հրատարակելով հռչակավոր «Գեղարվեստը», որի էջերում իր իսկ՝ Լևոնյանի կողմից լուսաբանվում են ազգային ու միջազգային արվեստների բազմաթիվ արդիական ու պատմական խնդիրներ, հատկապես հայ նկարչության, ճարտարապետության, թատրոնի և երաժշտության պատմության տարբեր հարցերը։

1938 թ. Գ. Լևոնյանը հրատարակում է «Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ» աշխատությունը[11], ուր հայ նախընթաց նկարչության ու բանաստեղծության պատմության տեսադաշտի վրա ուրվագծվում էր XVII—XVIII դարերի հայ բանաստեղծության և հատկապես կերպարվեստի կարկառուն ներկայացուցիչներ Նաղաշ, Հակոբ, Հարություն և Հովնաթան Հովնաթանյանների կյանքն ու կատարած գործը, որոշվում և գնահատվում նրանց պատմական տեղն ու դերը հայ նկարչության պատմության մեջ։ Աշխատությունն արժեքավոր էր հատկապես նրանով, որ առաջին անգամ էր մեզանում պատմա-մատենագրական փաստերի համադրումով առանձին ուսումնասիրության առարկա դառնում Հովնաթանյանների դպրոցը, որ ապագայում պետք է արժանանար արվեստագիտական նոր հետազոտությունների։

Մեկ տարի անց՝ «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի 1000-ամյա հոբելյանի առիթով Գ. Լևոնյանը հանդես է գալիս մի նոր աշխատությամբ՝ «Հայ կուլտուրան «Սասունցի Դավիթ» էպոսի ստեղծման ժամանակաշրջանում (VIII—XII դար)»[12], որը փաստորեն հիշյալ դարերի հայ գիտության, գրականության, պատմագրության, նկարչության, ճարտարապետության, քանդակագործության, զարդարվեստի, երաժշտության մի պատմական ընդհանուր տեսություն էր, ուր ի հայտ էր գալիս դարաշրջանի մշակութային այն բազմակողմանի միջավայրը, որի մեջ ձևավորվել էր հայ ժողովրդական վեպը։

Լևոնյանի արվեստագիտական ուսումնասիրությունների մեջ բացառիկ արժեք ունի 1941 թ. հրատարակած «Թատրոնը հին Հայաստանում» մենագրությունը[13]։ Իր տեսակի մեջ լինելով առաջինը մեզանում, այդ աշխատությունը փաստորեն հիմք էր դնում մի նոր առարկայի՝ հայ հին թատրոնի պատմագիտությանը, որ հետագայում այլ հետազոտողների կողմից նոր ուսումնասիրություններով առավել խորացվեց ու լայնացվեց։

Վերոհիշյալ բնագավառներով և աշխատություններով, սակայն, չեն ավարտվում Գ. Լևոնյանի գիտական հետաքրքրությունների շրջանակներն ու ստեղծած արգասիքները։ Նա ունի տպագիր և անտիպ այլ աշխատություններ ևս, որոնցից են «Բառարան հայ գրական ծածկանունների»[14], «Գառնիի հեթանոսական տաճարի առեղծվածը»[15], «Հայ կերպարվեստագետներ, միջին դարերից մինչև մեր ժամանակը» կենսագրական բառարանը (անտիպ), «Հայ արվեստի պատմության բիբլիոգրաֆիա» (անտիպ) և այլն, որոնք դարձյալ արժեքավոր հավելումներ են հայագիտության նվաճումներին։

«Գարեգին Լևոնյանի ընդգրկումը լայն էր, հետաքրքրությունները՝ բազմազան, ծրագրերը՝ շատ,—գրել է Ավ. Իսահակյանը։—Նա տասնյակ տարիների ընթացքում, իր անխոնջ գործունեությամբ հիշեցնելով ժրաջան մեղվին, հավաքել և կուտակել է ահագին փաստական նյութ. գրքերից, արխիվներից, փոշիների տակից, մի խոսքով՝ անհայտությունից լույս աշխարհ բերել բազմաթիվ փաստեր ու տվյալներ...»։

Եվ դա այն ազնիվ երախտիքն է, որով Լևոնյանի անունը առմիշտ կապված կմնա հայագիտությանն ու հայ մշակույթին։

---

11 Գ. Լևոնյան, Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, № 1, էջ 50—55, № 2, էջ 24—29, № 4, էջ 51—55։

12 Տե՛ս «Սասունցի Դավիթ» հոբելյանական ժողովածու՝ նվիրված էպոսի 1000-ամյակին, Երևան, 1939, էջ 203—229։

13 Գ. Լևոնյան, Թատրոնը հին Հայաստանում, Պատմա-բանասիրական տեսություն, Երևան, 1941, 184 էջ։

14 Գ. Լևոնյան, Երկեր, էջ 443—478։

15 Տե՛ս «Խորհրդային արվեստ», 1940, № 1, էջ 44—47։